

«ՀԱՅ-ԹԻՒՐԿԱՆ ՋԱՐԴԵՐԻ» ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ¹⁾).

I

Հայ-թիւրքական ջարդերը, որոնք կազնեցրել են Անդր-
կովկասի նօրմալ կեանքի ընթացքը, իբրեւ սեւ ապառաժ ցցուե-
լով ազատարար շարժումների դիմաց, մի խոշոր հասարակա-
կան պրօբլեմ է, որը քննելու համար բնականաբար անհրաժեշտ
է լինել օրեկտիւ:

Ջարդեր ու կոտորածներ ամբողջ Ռուսիայում են, որտեղ
խուլիգանների ու զօրքի սանձարձակ կամայականութեան է
յանձնուած այս կամ այն ժողովուրդը, ուսանողութիւնը, աշա-
կերասութիւնը, հասարակաց լաւագոյն մասի կարծիքը ղեկավա-
րող ինտելիգենցիան, ամեն տեղ, որտեղ կայ կոիւ տիրապետող
քաղաքական կարգերի՝ սանձարձակ ու հիւժուած ինքնակա-
լութեան դէմ, որի գոյութիւնը պատմական անախրո-
նիզմ է այսօր:

Ձախջախուած ինքնակալութիւնը տեսնելով որ գրուած է
իւր մահացուցակը, կատաղի բողոքը անցել է ժողովուրդի
բոլոր խաւերը, ոչակցիա առաջ բերելու համար սկսեց ջարդել
այն բոլոր տարրերը, որոնց մէջ նկատում է հակակառավար-
չական, յեղափոխական շարժում: Ջարդել, կառավարութեան
կարծիքով կընշանակէ, սարսափեցնել ազգաբնակչութեան
աւելի չափաւոր տարրերը, նրանց ստիպել փրկութիւն որոնելու
ինքնակալութեան թեւերի տակ և միաժամանակ կամայ թէ ա-
կամայ դուրս շարժելու իրանց միջից ծայրայեղ տարրերը:
Ջարդել, այդ կընշանակէ, միաժամանակ այդ փոթորիկների
մէջ դուրս հանել և խորտակել յեղափոխական ուժերը, դատա-

1) Շօշափուած հարցը, որին մենք նուիրել ենք մի շարք տեսութիւն-
ներ, չափազանց կարեւոր է մեր ներկայ և ապագայ կեանքի մէջ, ուստի
լայն, բազմակողմանի լուսաբանութիւնը անհրաժեշտ է: Տպելով այս գրուած-
քը պէտք է ասենք որ մենք համաձայն չենք յօդուածի մի քանի կէտերի
հետ:

պարտելով նրանց չէզօքութեան, երբ նրանք ամեն մի քայլ ստիպուած պիտի լինեն անել բազմաթիւ անմեղներին արեւան գետերով. այդ ջարդերով միաժամանակ իմաստուն ինքնակալութիւնը երազում էր բաժանել ու ջլատել հակառակորդ ուժերը, հեշտութեամբ տիրելու համար, աշխատում էր իւրաքանչիւր ազգութեան մէջ զարգացնել նացիօնալիզմի որդը, ներհակ տարրերի թոյնը, խտերնացիօնալի կուռ, ջախջախիչ ուժի դիմաց:

Այդ միջոցներով միապետական դիպլոմատները ցոյց տուին միայն, թէ ինչպիսի անախրոնիզմ է միապետական սիստեմը ներկայ տնտեսական-հասարակական կարգերի ժամանակ, թէ որքան անմիտ է փրկել աշխատելը դէպի անդունդը զահավիժուող ինքնակալութիւնը: Յեղափոխութեան հետզհետէ զօրեղացող տատանումները և ինքնակալութեան ողորմելի դրութիւնը ապացուցեցին, որ ջարդերը, ինքնակալութեան հիւանդոտ ջղաձգութիւններն են, որ ինքնակալութիւնը և յեղափոխութիւնը, տրամագծօրէն իրար ոչնչացնող հակադրութիւններ են, հետևաբար երկուսից մէկին է պատկանում կեանքը:

Եթէ Ռուսիայում կառավարութեան նեցուկ դարձան խուլիգանները, ապա Կովկասում հայերին, իբրև յեղափոխական տարրի, ջարդելու համար, կային այնպիսի հանդամանքներ ու դրութիւններ, որոնք արգասիք էին Անդրկովկասի տնտեսական կեանքի յարաբերութիւններին և որոնցից հեշտութեամբ և մեծ հաճութեամբ օգտուեց մեռնող ուժի մը: Ի՞նչպէս:

II

Կովկասը անցնելով ռուսական կառավարութեան ձեռքը, ներկայացնում էր մի անկերպարան, կիսակուլտուրական երկիր, որը սակայն մտնում էր առաջխաղացութեան աւելի նորմալ պայմանների մէջ քան առաջ, և բովանդակում էր իւր մէջ ժողովուրդներ, տարբեր կուլտուրական մակարդակով և տոանձնայատուկ դասակարգային դիֆերենցիայով. տիրապետող խոշոր ժողովուրդները կազմում էին և են՝ Հայերը, Վրացիները և Թիւրքերը: Առաջինը իբրև աւելի ճշդուած, քաղաքականապէս հալածուած ժողովուրդ, զարգացրել էր իւր մէջ յարմարուելու ընդունակութիւնը, զարգացրել էր իւր մէջ արհեստները և վաճառականութիւնը՝ հանդամանքներ, որոնց վրայ յենուած էր նրա մրցելու, գոյութեան կուռում պայքարելու ուժը. այդպիսի մի ժողովուրդ, դուրս եկած թիւրք-թաթարական գերիշխանութիւնից, չէր կարող ունենալ խոշոր կալուածատիրական կատեգորիա. հայկական արիստոկրատիան ներկայացնում էր, հո-

գևոր արիստոկրատիա՝ այսինքն կղերը, որի ոյժը մէծ է եղել ժողովրդի վրայ, շնորհիւ աղգային քաղաքական դիկտատուրայի բացակայութեան. բայց իբրեւ քաղաքական տնտեսական կառուցորիա, նա մի պասսիւ ուժ է, մի բուժ ու նահապետական շահագործող, օրգանապէս յետադէմ ու քարացած: Առաջխաղաց տարրը հայ ժողովրդի մէջ վաճառականութիւնն էր, որը իբրեւ առաջխաղաց տնտեսական կատեգորիա օրգանապէս ընդունակ էր և ձգտում էր աւելի և աւելի առաջ ընթանալու: Ձլինելով հայերի մէջ ուժեղ կալուածատիրական խաւ, ժողովրդի մէջ տիրապետող էր հանդիսանում կղերը, որը իբրեւ յետամնաց տարր, յետ նահանջեց ասպարիզից, տեղի տալով զարգացող վաճառականութեան, որը քիչ թէ շատ բարուք պայմանների մէջ կարողացաւ զգալի ուժ ներկայացնել: 60-ական թթ. բեֆորմները ազատ զարգացման դռներ էին բացում ոռւս բուրժուազիայի համար: Այդ առաջխաղացութիւնը, արդիւնաբերութեան արագ աճումը, չէր կարող իւր ընթացքի մէջ չըզգել նաև Կովկասը: Բուրժուազիայի զարգացումը Ռուսիայում, խթան էր և կովկասեան բուրժուազիայի զարգացման. հասարակական հոսանքները, որոնք ծնունդ էին այդ շարժման՝ լիբերալիզմը, միաժամանակ խթան էր հասարակական ուժերի առաջխաղացման Ռուսիայի բոլոր կուլտուրական տարրերի մէջ: 60-ական, 70-ական թթ. լիբերալ շարժումները Ռուսահայերի մէջ կապուած էին հայ բուրժուազիայի առաջխաղացութեան հետ, որը հետևանք էր ոռւսական կեանքի զարգացման նոր շրջանին, երբ բուրժուազիան ճորտատիրական կարգերի վերացմամբ, մի քայլ ևս յաղթանակեց: Բուրժուազիան ընդհանրապէս և հայ բուրժուազիան մասնաւորապէս իբրեւ տնտեսական եռուն մրցման ենթակայ մի կատեգորիա, պիտի ձգտէր ներմուծել Նւրուպական քաղաքակրթութիւնը, տեխնիկան իւր օգտապատի մէջ. նա պիտի բռնէր դիրքեր տնտեսական աւճապարտող արշաւի ժամանակ, պիտի օգտուէր բոլոր հնարներից, ձեռք ձգելու և պահելու արդիւնաբերական ձեռնարկներ. հայ բուրժուազիայի ըիսկից, քաղաքակրթական նորանոր միջոցներ իւրացնելու ընդունակութիւնից էր կախուած, նրա, Կովկասի մէջ ազդեցիկ տնտեսական դիրքեր բռնելը. և իրաւ, ոչ մի տարր Կովկասում այնպէս ընդունակ և վարժ չէր բռնելու այդ դիրքերը, ինչպէս հայ վաճառականը: Նա կարիք ունէր մասնագէտ տեխնիկներին, քաղաքակրթական նորմուծուող ձևերին, և դրս հետևանքն էր անադին թուով ինտելիգենտ պրոֆեսիայի մարդկանց բազմանալը. այդ ընդհանուր շարժումը ստեղծեց մեր մէջ 19-րդ դարու կուլտուրական կեանքը:

Խոշոր կապիտալի մուտքը Կովկաս ստեղծեց եւուն մրցութեան ասպարէզ, արդիւնաբերական ճիւղերի զարգացումը առաջացրեց բուրժուազական համախմբութիւնների պայքարը, որը արտայայտուեց նաև մամուլի մէջ: Բագուն, համաշխարհային այդ շուկան, և Կովկասի զարկերակը, գրաւեց խոշոր կապիտալի ներկայացուցիչներին. ոչ միայն հայ առևտրականն էր, որ միջոցներ ունէր համեմատաբար, տնտեսական ձեռնարկներ անելու, այլև նա էր, որ աւելի ընդունակ էր մրցելու այդ ասպարիզում քան տեղական որևէ այլ ժողովրդի վաճառականութիւն: Ապշերոնի դաշտերը, որ ընակեցրած էր թիւրքերով, հետզհետէ գրաւուեցին վիշկաների անտառով: Այդտեղ սկսեց զարգանալ հայ բուրժուազիան. 90-ական թ. նա խոշոր ուժ էր ներկայացնում արդէն. իսկ այսօր, երբ նոյն տեղում մրցութեան մէջ է մտել եւրոպական և ուսական կապիտալը տեղական կապիտալի հետ, այնուամենայնիւ նաութային արդիւնագործութեան մօտ 300/0-ը գտնուում է հայ բուրժուազիայի ձեռքը, մօտ 50/0-ը թիւրք, իսկ վրացական բուրժուազիայի ձեռքը գրեթէ չնչին: Քաղաքի ընդհանուր առևտուրը գլխաւորապէս գտնուում է հայ միջին ու փոքր բուրժուազիայի ձեռքը: Այդ պատկերն ունի Կովկասի ամենախոշոր տնտեսական կենտրոնը:

Իսկ Թիֆլիսը, որը վրացի նացիոնալիստները չեն մոռանում, որ դա Քարթլիայի նախկին մայրաքաղաքն է և նրա աւերուած պարիսպները տեսնելով, դառնութեամբ արցունք են կաթեցնում, յիշելով նրա հին փառքը: Այդտեղ տնտեսական ձեռնարկների մեծագոյն մասը հայ բուրժուազիայի ձեռքում է: Նրա ձեռքում է քաղաքի արդիւնագործութիւնը և առևտուրը, նա կապիտալի միջոցով տիրացել է քաղաքի լաւագոյն մասերին. ծխախոտի արդիւնագործութիւնը, որը Թիֆլիսի խոշոր տնտեսական ձեռնարկներից է, գրեթէ հայ բուրժուազիայի ձեռքում է, ոգելից ըմպելիների արտահանութեան մէջ հայ բուրժուազիան զօրեղ և վտանգաւոր մրցակից է վրացականին: Այդ դրութեան մէջ է Կովկասի երկրորդ տնտեսական կէտը:

Այդպէս և այլ տեղեր, Ղարաբաղի, Նուխուայ մետաքսագործութիւնը և Սիւնիքի պղնձահանքերը, Նրևանի գինեգործութիւնը և առհասարակ բամբակի, բրդի արտահանութիւնը, գլխաւորապէս գտնուում են հայ կապիտալիստների ձեռքում:

Այդ յաջողութիւնները որ ունէր հայ բուրժուազիան, անդուրեկան պիլիւններ էին բիւրոկրատիական կառավարութեան համար. նա տանել չէր կարող, երբ հարուստ Կովկասում ուսական կապիտալը աննշան դեր էր խաղում, տանել

չէր կարող, երբ համաշխարհային Ապշերոնում ուսւ ըուրժու-
ազիայի մրցումը ուժեղ չէր. այդտեղ հայ ըուրժուազիան կա-
տարում էր խոշոր դեր, մուտք էր գործում անգլիական կա-
պիտալը, իսկ ուսւ կապիտալը անկարող էր մեծ դեր կատա-
րել. նա դեռ խուսափում էր վտանգաւոր ըիսկներէց բաւական
հետեւ վայրի անծանօթ մի գործի մէջ: Ինքնակալական-ըիւրո-
կրատիական կարգերի մէջ, կապիտալի ազատութիւնը, վանդա-
կի մէջ ընկած թռչնակի ազատութիւն է, որին տալիս են
շարժուելու որոշ սահմաններ. ահա թէ ինչու հայ ըուրժուա-
զիայի յաջողութիւնները դիւրեկան չէին և սանձուած էին յա-
ճախ կառավարութեան կողմից, իսկ ուսւական կապիտալի
ներկայացուցիչները կատաղած ուժակոծում էին հայ ազգը,
անուանելով նրան վաճառական ժողովուրդ—չէին զլանում
պախարակել այս կամ այն վարչապետին, եթէ գտնում էին որ
սա թուլութեան կամ յիմարութեան շնորհիւ միջոցներ է տուել
օտար կապիտալի զարգացման կովկասում. բաւական է յիշել
Սուլթորին հօր, Իլովայսկու նետերը, ուղղած Գոլիցինին:
(«Кремль» «Нов. вр.»):

Հայ ըուրժուազիան բնական է պիտի բռնէր շողոքոր-
թութեան ու յարմարուելու քաղաքականութիւնը. բնական է, որ
նրան դիւր չէին գալ կառավարութեան քմահաճոյքները, բայց
պարզ էր և այն, որ նա անկարող էր որեւէ ըմբոստ քայլ կամ
բողոք անել, նա օրգանապէս իբրեւ կոսմոպոլիտ մի տարր,
անում էր այն, ինչ յարմար էր իւր շահերին. առիթներ էր որոնում
դիւր գալու կառավարութեան, մասնակցում էր փողով կառա-
վարութեան ձեռնարկներին, կուրօրէն հետեւում էր նրա բռնի
ուսւացման քաղաքականութեան. նա արտաքուստ միապետա-
կան էր, թէև սրտանց կը կամենար մի փոքր աւելի լաւ պայ-
մաններ. արհամարհում էր այն ինչ ազգային էր, որովհետեւ
չկար դրանից ոչ մի շահ, թէև ձեռքից չէր կարող
բաց թողնել ազգայնական քաղաքականութիւնը, երբ նա
ձեռնտու է իւր շահերին. նա գիտէ շոյել ժողովրդի գը-
ռեհիկ բնադղները, երաշխիքներ տալով իւր ազգասիրութեան
մասին. իոկ նրա իդէօլոգները աշխատում էին հայ ըուրժուա-
զիային աւելի և աւելի մօտեցնել ազգայնութեան աւանդներին:
Հայ նորածին կապիտալի ոյժն էր, որ զարթեցրեց նրա իդէօ-
լոգների մէջ քաղաքական ուրոյնութեան գաղափարը, այն ժա-
մանակ, երբ դեռ քնած էր թիւրքը, թմրած էր վրացին, հե-
տեւաբար հայ ըուրժուազական իդէօլոգները այդ գաղափարնե-
րը ու ծրագիրները անուշադրութեան մատնուելով մեր հարե-
ւանների կողմից, միայն չէին վրիպում բիւրոկրատիայի աչքե-

րից, որի խեղկատակները նենգամտութեամբ հրէշներ էին ոտեղծում ամենապարզ իրողութիւններից. («Нов. вр.» «Моск. Вѣд.» «Кавказъ»):

Որքան և հայ բուրժուազիան բռնէր շոյելու քաղաքակա-
նութիւնը, այնուամենայնիւ կառավարութեան համար նա մի
անյարմարութիւն էր պետութեան ծայրերից մինում: Ռուս
գաղթականներով նա սկսեց բնակեցնել Կովկասը, թունաւորե-
լով թէ գաղթողների արիւնը և թէ տեղական բնակիչներին,
սկսեց փակել բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները հայե-
րի մէջ այն ժամանակ, երբ հայութիւնը ամենալոյսեալ տարրե-
րից էր համաբւոյն: Այն ընպրեսիաները, որ դորժադրում էր
լեհերի, ֆինների, հրէաների վերաբերմամբ, սկսեց գործադրել
և հայերի նկատմամբ. նա կամենում էր բռնի ճնշել ծայրերը և
ուժեղացնել կենտրոնը և դրանով և աւելի ապահովել իւր գոյ-
ութիւնը և միաժամանակ ուժեղացնել ռուսական կապիտալը:

Կովկասում ատելի էր հայ բուրժուազեան, որ կա-
ռավարութեան տեսակէտից միևնոյն է թէ հայ տարրը,
չնայելով որ այն կուլտուրական հիմնարկութիւնների փա-
կելը միայն վնասում է ժողովրդի աշխատաւոր մասսանե-
րին: Հետևաբար ատելութիւն բերողը ատիայի կողմից զէպի
հայ բուրժուազիան և ժողովուրդը վաղուց գոյութիւն ունէր:
Ռուսական ու հայկական լեզալ մամուլը միամտաբար կար-
ծում է, թէ Գօլիցինն էր միայն որ պատճառ էր այդ բոլո-
րին. այդ ասել կընշանակէ հասկացողութիւն չունենալ ինքնա-
կալական-բերողատիական ռէժիմի մասին, կընշանակէ լաւ
չըմբռնել տնտեսական քաղաքական կեանքի երևոյթները:

III

Ի՞նչ էր ներկայացնում Վրաց հասարակութիւնը, մտնելով Ռու-
սական ինքնակալութեան դիկտատուրայի տակ: Նա նոր իւր
Ֆէօդալական թաղաւորութիւնը վերջացրած մի հասարակու-
թիւն էր. այդտեղ կային Ֆէօդալներ (ադնուականներ) և գիւ-
ղացիներ, երրորդ դասակարգը՝ բուրժուազիան ոչինչ չէր ներ-
կայացնում իրենից. հայ վաճառականներն էին, որոնք իրենց
մէջ զարգացնում էին երրորդ դասակարգի սաղմերը Վրաստա-
նում:

Ֆէօդալիզմը իբրև ռէակցիօնէր մի տարր, օրգանապէս
անընդունակ զարգացման և ռիսերիմ հակառակորդ բուր-
ժուազիայի առաջխաղացման, չէր կարող լինել պրոգրեսիւ
ընդթ. նա էր այն ֆակտորը, որի վրայ յենուած էր ամբողջ

Ռուսիայի կառավարչական ինքնակալական սխտեմը. և զարմանալի չէ, որ վրացական ֆեոդալները արժանացան ռուսական կառավարութեան հովանաւորութեան, կազմակերպուելով իրբն ազնուականների դաս, մեծ արտօնութիւններով: Գիւղացիութիւնը ներկայացնում էր ճորտատիրական կարգերի մէջ շահագործուող, հարստահարուող մի մասնա: 60-ական թ. բեֆորմները յանուժ ցարիզմի փրկութեան, նրա, մահուան գրաւականով, ազատելով գիւղացիութիւնը այդ կարգերից, նաև նուկասում դռներ բացեց բուրժուազիայի զարգացման առջև ի ֆլաս կալուածատէրերի. իսկ բուրժուազիան պիտի կազմակերպուէր հայ վաճառականներից, որը արդէն բռնում էր իւր դիրքը: Հայ բուրժուազիայի զարգացումը—վրաց կալուածատէրերի քայքայումն էր նշանակում: Այդ պրոցէսի զարգացումն այնտեղ էր հասնում, երբ մի օր, կապիտալը, գտնուելով հայ բուրժուազիայի ձեռքը, պիտի շահագործէր ինչ կարող էր, և Վրաստանում պիտի տիրանար արդիւնագործութեան և առևտրին, քչելով վրաց ազնուականներին ասպարիզից, իրբն հետզհետէ սնանկացող, մրցման չդիմացող կատեգորիա: Ատելութիւնը, որ սկսեց զարգանալ վրաց ազնուականների մէջ դէպի հայ բուրժուազիան, բնական մի հրեւոյթ էր. մի երևոյթ, որ տարիների ընթացքում խուլ պայքար էր զարգացնում երկու ազգերի տիրող դասակարգերի մէջ, որը այդ երկու կատեգորիաների իդէօլոգները մասամբ քաղաքագիտութեամբ և մասամբ միամտութեամբ ազգային կռիւ են տնտանում, այն ինչ, այդ միայն և միայն դասակարգային կռիւ է, օրգանապէս առոյգ բուրժուազիայի և սնանկացող ազնուականութեան միջև: Իրերի պատմական դասաւորութեամբ բուրժուազիան գլխաւորապէս հայերից է, իսկ կալուածատէրերը՝ վրացիներից, մի հանգամանք, որ շահագործութիւնների տեղիք է տալիս նացիօնալիզմի ասպետների կողմից: Վրաց ազնուականութեան իդէօլոգների նախանձոտ նետերը ուղղած հայ բուրժուազիային, ազգայնութեան վերնաշորի տակ, հանդիպում էր հայ բուրժուազիայի ինքնագոհ իդէօլոգների «եղբայրութեան», «ազգերի համերաշխութեան» քարոզին: Սակայն, կարող է եղբայրութիւն լինել այդ երկու կատեգորիաների մէջ!?

Ահա թէ ինչու, երբ հրկիզում էին տներ ու դիւղեր, ոտնայարում էր այն ամենը ինչ վեհ է մարդու համար, այն ամենը ինչ երկար տարիների քաղաքակրթական էվոլյուցիայի արդիւնք էր, այդ բոլորը շարժում էր վրաց ընկնցիօներ տարբեր՝ կալուածատիրական և մանր բուրժուական դասերի օրգան-

ների ցինիկ ու գաղտագողի հրճուանքը. («Իվերիա», «Ճնորհա-
Փուրցելի»):

IV

Երբորդ տարրը Անդրկովկասում թիւրքերն էին, որոնք ի-
րենց թուով աւելի գերազանց իսկ քաղաքակրթական մակար-
դակով ամենից աննախանձելի ժողովուրդն էր ներկայացնում:
Մահմեդական դեսպոտիզմից աղբուած և ինքնակալական հա-
մեմատաբար աւելի բարուռը դեսպոտիզմի տակ մտնող այդ ժո-
ղովուրդը դարձեալ իրենից ներկայացնում էր ֆէօդալական կար-
գերի մէջ ապրող մի տարր: Հին խաներն ու բէգերը մտնելով
ռուսական իշխանութեան տակ, ճիշտ է զրկուեցին իրենց հին
արտօնութիւններէ, բայց ֆեոդալական շահագործող, կեղեքող
կալուածատէրերը, որոնք սակայն իրենց էութեամբ անընդա-
նակ էին ընթանալ ժամանակի պահանջներէ հետ:

Անկիրթ ու վայրենաբարոյ, նրանք ոչ մի հասկացողութիւն
չունէին հողի շահագործութեան կատարելագործող միջոցնե-
րի մասին, իբրև ծոյլ ու զելս, նրանք ընկած ուտում էին գիւ-
ղացիների վաստակները, բայց միաժամանակ մեծ դրամագը-
լուխներ ծախսեւր ունենալով, հողա հարկեր վճարելով, նրանք ան-
կարող էին իրենց նահապետական տնտեսութիւնից այդ գու-
մարները հանել. այդ բոլորի հետեանքն էին պարտքերը,
դրամ նրան տալիս էր հայ վաճառականը, անշուշտ բարձր 10-
ներով, որի հետեանքն էլ ինքնու պարտապանի կալուածներ իւ-
րացնելը. այդպիսի փաստեր քիչ չեն Նախիճևանում, Ղարա-
բաղում և Սիւնիքում: Թիւրք բեգերը անընդունակ էին պահ-
պանել իրենց դիրքը այնպիսի պայմաններում, որտեղ զար-
դանում էր կապիտալիզմը, որի սրնթաց արշաւի առաջ ընա-
կան մահով պիտի անշնչանային բոլոր բէակցիօնէր տարրերը
և կեանքի պահանջներին անհամապատասխան ինստիտուտները:
Թիւրք կալուածատէրը զգում է իւր դրութիւնը խախտւոյ, տես-
նելով իրեն անկարող դիմագրաւել կապիտալի խաղերին, նկա-
տելով իրին անընդունակ մրցելու նոր զարգացող բուրժուա-
զիայի հետ, որի ամեն մի առաջխաղաց քայլ անում է ի ֆեո-
դալական թանձին հայ վաճառականութեան զարգանում էր Ան-
դրկովկասի տեղական բուրժուազիան. նա հետզհետէ սկսում
էր ճնշել թիւրք բէգութիւնը և վրաց ազնուականութիւնը: Իբ-
րև զընգող մետաղի հրամանատար, նա կարողանում է
կեանքի բոլոր երևոյթները դնել կախման մէջ իւր քմա-
հաճոյքներից. նա հետզհետէ տիրում է այն հողերին,

որոնք պատկանում էին բեգերին, քաղաքներում բռնում է ամենալաւ մասերը, կարողանում է խաղալ կեանքում ազդեցիկ դեր իբրեւ իշխող, որի ձեռքին է ուժը: Մնան-կացող թիւրք բեգը, որի յիշողութիւններն մէջ դեռ վառ է իւր հին փառքը, որը մի ժամանակ տիրում էր իբրեւ իշխան, այժմ զգում է իրեն ողորմելի. նա փոխանակ իւր հիւանդութիւնը վերազրելու կապիտալիզմի զարգացող բնական ընթացքին, կարծում է թէ հայ կապիտալիստն է մեղաւոր: Հայ կապիտալիստի պատկերը դառնում է նրա աչքում ամբողջ հայ ժողովուրդի պատկեր:

Միակ քաղաքը, որտեղ գոյութիւն ունի ինդուստրիական թիւրք խոշոր բուրժուազիա, դա Բագուն է, սկզբում զուտ թիւրքաբնակ մի վայր, որտեղ, այսօր թիւրք բուրժուազիան չի կարող ամենից շատ չը նախանձել հայ բուրժուազիային, որը իւր հետ միասին է ապրում, որի յաջողութիւնները նա տեսնում է աւելի կօնկրեալ օրինակներով, որը նաւթային աշխարհում կատարում է խոշոր դեր. նրա ձեռքն է առատի մեծ մասը. յանձին վերջինիս նա տեսնում է իւր անմիջական մըրցակցին. նա անընդունակ է մտածել, որ եթէ չըլինէր հայ բուրժուազիան, նրա տեղը կը բռնէր ուրիշը, բայց յամենայն դէպս ոչ ինքը, իւր անձեռներէցութեան, տգիտութեան, անշարժութեան շնորհիւ: Ճիշտ է նա կարող է մտածել, որ իւր դրութիւնը վտանգուած է տնտեսական ազատ մրցութեան ասպարիզում, նա նկատում է այդ մանաւանդ այժմ, երբ մի կողմից լեղափոխութիւնը, միւս կողմից եւրոպական և ռուսական կապիտալը աւելի ևս նեղ դրութեան մէջ պիտի դնէին անկուլտուրական ձեռնարկողներին: Բնականաբար նրա գլխում ծրագրւում են նաև քաղաքական նպատակներ, իբրեւ ելակէտ:

Մեղադրել հայ բուրժուազիային նրա զարգացման համար, պիտի լինել վրացի կամ թիւրք նացիօնալիստ, որոնք իրենց սնունդը ծծում են սնանկացող ֆէօդալիզմի և մանր բուրժուազիայի չորացած ստինքներից:

Քաղաքակիրթ երկրներում, որտեղ մղւում է անընդհատ պայքար ինդուստրիական և ագրարային բուրժուազիայի միջև, այստեղ թիւրք ժողովուրդի ինդուստրիական և ագրարային մագնաւների շահերը առայժմ ընթանումն են ներդաշնակ. երկուսը ևս, որոնցից երկրորդը դեռ ֆէօդալիզմի նահապետական տընտեսութեան շրջանում է, իսկ առաջինը, շնորհիւ իւր դրութեան, կանգնած է մանր բուրժուական բէակցիօնէր տեսակէտի վրայ, համահաւասար կերպով ճնշւում են հայ կապիտալիստներին: Նրանք միացած իրենց ընդհանուր թըշնա-
նայեմբեր, 1905.

մու դէմ, աշխատում են հասկացնել թիւրք խաւար մասսային, որ իրենց շահերը նրա շահերն են և իրենց թշնամին նրա թշնամին: Խնդիրը, ըստ տիրող դասակարգի սովորական քաղաքագիտութեան, դնելով ազգային կամ կրօնական հողի վրայ, ինչպէս ձեռնտու է այդ, նրանք հայ բուրժուազիայի մէջ տեսնում են ոչ թէ մի դասակարգ, այլ ամբողջ ազգութիւնը. և պրոպագանդը դառնում է այս դէպքում հակահայկական: Որքան անխիճագիտակից է մի ժողովրդի աշխատաւոր մասսա, նոյնքան նա հեշտութեամբ ենթարկւում է իշխող դասակարգի ազդեցութեան. մանաւանդ երբ նա տնտեսապէս ճնշուած է, հետեւապէս ընդունակ ապստամբ քայլերի. և փոթորիկը պատրաստ է իրերն «ազգային սրբազան կոիւ», կուզէ իբրեւ «կրօնական պատերազմ»: Դասակարգային շահերից ծագած ատելութիւնը և նախանձը, շնորհիւ խաւար հասկացողութիւնների, կերպարանաւորուելով ազգային կոիւների, պիտի առաջացնէր այն, ինչ եղաւ Դժուարութիւն չկար թիւրք բէգի համար իրենից տնտեսապէս կախուած, աղքատ, ըստ մեծի մասին խաշնարած, վայրենաբարոյ գիւղացիների և հասարակութեան տականքի մէջ լարուած դրութիւն գոգոնել, դարթեցնելով նրանց ստոր ընադդները և մղելով թալանների ու կոտորածների: Մանաւանդ, տնտեսապէս հարստահարուած այդ գիւղացիութիւնը, քաղաքական յուզուած բոլորներում, եթէ ոչ այսօր գէթ վաղը, կարող է դէմքը մղել դէպի իւր հարստահարիչները. այդ զգում են թիւրք Ֆէօդալները: Դարձնել այդ մասսայի ուշադրութիւնը այլ կողմ և ծառայեցնել նրան իբրեւ գործիք, շոյելով նրան միամիտ ցընորքներով և որ գլխաւորն է թալանների յուսով, եղաւ թիւրք տիրող տարրի գործադրած քաղաքականութիւնը. որով և ջարդուելով հայ, որոշ չափով գիտակից և աւելի շուտ ընդունակ գիտակցելու, գիւղացիութիւնը, անկարող պիտի լինի բողոքելու և շարժուելու այդ նոյն Ֆէօդալների դէմ:

Միւս կողմից, հայ ժողովուրդը ինքնապաշտպանութեան համար ստիպուած լինելով միանալ, յարմար առիթ է ներկայանում բուրժուազիայի համար, պնդելու, որ ամբողջ ազգութեան շահերը մի է, բանուոր ու կապիտալիստ եղբայրներ են, ապա և միաձուլ ազգային կոիւ ընդհանուր թշնամու դէմ:

Սակայն ի՞նչ է ներկայացնում այդ գործիք ծառայող թիւրք մասսան:

Բիւրոկրատիական-ինքնակալական ռէժիմը մի հզօր խոչնդոտ լինելով կուլտուրական ուժերի առաջխաղացման, նա աւելի ճնշող, աւելի բարբարոս էր թիւրք մասսայի նկատմամբ. նախ այն հանգամանքը, որ անքաղաքակիրթ,

անսահման խաւար ու ճնշուած մի մասսայի համար, որի լուսաւորութեան շեկը մահմեդական կղերի ձեռքն է, անհրաժեշտ էր աւելի հզօր խթան մղելու քաղաքակրթութեան, զարգացման ուղին, որ գոյութիւն չունէր, մի այլ կողմից, ուսւ բիւրոկրատիան, քաղաքակրթութեան ոչ մի նշոյլ չմտցնելով իւր հպատակների մէջ, բեպրեսիւ միջոցներով խեղդում էր ամեն մի առաջխաղաց քայլ, որ երևան էր գալիս թիւրք մասսայի մէջ: Ամբողջ մի դար այդ ժողովուրդը մնաց այնքան խաւար և փտամնաց ինչպէս և մի դար առաջ, ամբողջ մի դար ոչ մի միջոց չեղաւ, որնէ կուտուրական գործ առաջացնելու այդ խեղճ հարստահարուող և վայրենի ժողովուրդի մէջ. նա մնաց իւր գիշատիչ բնազդներով, իւր հին նախապաշարունակներով ու ֆանատիզմով, տնտեսապէս աղքատ, դարձեալ ենթակայ մոլլաների պատգամներին և բէգերի հրամաններին. և այդ մասսան, որ գիտակից լինելով, պիտի մղէր մի ուժեղ կռիւ իւր հարստահարիչների՝ բէգերի ու խաների, տիրող ռէժիմի հիմքերի դէմ, այդ մասսան շնորհիւ իւր անգիտակցութեան դարձաւ կոյր գործիք իւր թշնամիների ինտրիգների համար:

Այդպէս էր իրերի դրութիւնը. կար մի խուլ պայքար բուրժուազական համախմբումների մէջ. մի կողմից հայ բուրժուազիան, իսկ միւս կողմից թիւրք կալուածատէրը և համեմատաբար թոյլ, անկարող ինդուստրիական բուրժուազիան, որի մէջ զարթնել է քաղաքական գիտակցութիւնը: Այդ պայքարը ազատ, քաղաքացիական երկրներում կարող էր մղուել պարլամենտական հողի վրայ, ինքնակալական դեպոտիզմի մէջ կը մնար համր, իսկ արտայայտուած միջոցին բուռն ու ցասկոտ: Եւ ինքնակալութեան մահուան ճգնաժամին ու նրա ձեռնարկած փարդերի ու կոտորածների քաղաքականութեան պատճառով այդ պայքարը պիտի արտայայտուէր Անդրկովկասում կատարեալ քաղաքացիական պատերազմով, շնորհիւ թիւրք բանուորութեան և աշխատաւոր մասսաների և յատկապէս գիւղացիութեան տնտեսական ներկայ ստրուկտուրայի և կատարեալ անգիտակցութեան:

V

Կռիւը հայ առաջագէտ բուրժուազիայի և թիւրք բէակցիօներ կալուածատէրերի և բուրժուազիայի միջև աւելի պիտի խստանար վերջին տարիներս, երբ քայքայում էր բացարձակապէս ինքնակալական սխտեմը—միակ կարգերը—որի տակ կարող էին շնչել յետագէտ տարրերը և հետզհետէ մօտե-

նուս էին նոր կարգեր, բուրժուազական աւելի ազատ մրցութեան և տնտեսական ուժերի զարգացման համար, երբ հասնում է տագնապ թիւրք ըէգերի, խաների և նոյնիսկ մրցութեան չդիմացող թոյլ ինդուստրիական բուրժուազիայի համար. կռուի խստութիւնը ըէակցիօնէր ֆէօդալականութեան և պրոգրեսիւ բուրժուազիայի միջև անխուսափելի էր. քաղաքական փոթորկոտ, յեղափոխական ըռպէները ընդունակ են ամեն մի տնտեսական-քաղաքական կատեգորիայի ոչ միայն եռանդը կրկնապատկել իւր շահեկան կատեգորիայի ոչ միայն, այլև այնպիսի զարկ տալ նրա գիտակցութեան, որի համար խաղաղ ժամանակը երկար տևողութիւն է հարկաւոր. Բնական է, որ յետագէժ ֆէօդալականութիւնը և մրցումից վախեցող բուրժուազիան պիտի ինքնակալութեան հետ կռուէին այն բոլորի դէմ, ինչ այդ կարգերի զայքայման է ծառայում: Եւ մեռնող ինքնակալութիւնը փարուեցին առաջինին իրենց կորուստը ողբալով առաջին խորտակմամբ: Հայ խոշոր ու մանր բուրժուազիան, պրոլետարիատը դէպի ապագայ ազատ կարգերը ձգտող տարրեր են, իւրաքանչիւրը իր դասակարգային ձգտումների ունայտակնների համեմատ, թիւրք ֆէօդալները, հոգևորականութիւնը և բուրժուազիան ներկայ կարգերի պահպաններն են, որոնք գործիք են ծառայեցրել անգիտակից թիւրք գիւղացիութիւնը և բանուորութիւնը: Հետևաբար հայ-թիւրքական ջարդերը նոր ու հին կարգերի, առաջագէժ ու յետամնաց տնտեսական-քաղաքական կատեգորիաների կռիւն է, որը մարմնացել է այսօր այս ու այն անգութեան մէջ, արտաքուստ կրելով աղբային կռիւների բնատրուութիւն:

Բայց այդ հանգամանքները ծնել են և այլ պարագաներ, որոնք աւելի են բարդացնում հայ-թիւրքական ջարդերի խնդիրը: Որքան աւելի է ուժեղանում յեղափոխական շարժումը, նոյնքան աւելի է զարգանում թիւրք մագնատների գիտակցութիւնը, քաղաքական ձգտումները: Եթէ ինքնակալական կարգերը նոյնիսկ չեն երաշխաւորում նրանց գոյութիւնը, ապա ինչ կարող է լինել վաղը, երբ վերջացած կը լինեն այդ կարգերը ևս. և նրանց մէջ սկսեց աւելի զարգանալ այն միտքը, որ այսօր աւելի քան երեկ և կրկնակի վաղը վտանգաւոր է Ռուսիայի քաղաքական կարգերը իրենց համար. և աւելի քան այժմ չկայ յարժար Բալէ ներշնչելու թիւրք ժողովուրդին, կաղմա-կերպուելու և ձգտելու իրականացնել աղբային ամբողջութեան, քաղաքական միութեան իդէալը: Դարձնել Անդրկովկասը թիւրքիայի նահանգներ և այդպիսով կաղմել մի աղբային պետու-

Թիւն, որտեղ ապահովուած կը լինի Թիւրք բուրժուազիայի և ֆէօդալնեւի շահերը, այդ է Անդրկովկասի Թիւրք տիրող դասակարգի քաղաքական տենչանքը, որ արտայայտուած է պանիսլամիզմի մէջ¹⁾։ Այդօրինակ քաղաքական ձգտումներ ու շարժումներ նոր չեն պատմութեան մէջ. բաւական է յիշել 16, 17, 18, 19-րդ դարերում ազգայնական շարժումները և ազգայնական պետութիւնների կազմակերպութիւնները շնորհիւ նորածին բուրժուազիայի, բաւական է յիշել նոյն գաղափարից ծագած պանգերմանիզմը, պանսլաւիզմը և այլն։

Ազգային մարդջութեան և անկախութեան ձգտումը շատ վառ է զանազան ազգերի որոշ խաւերի մէջ, հէնց թէկուզ Ռուսիայում՝ լեհերի, հայերի վրացիների մէջ. նայած ինչ պարագաների մէջ, ինչ ժամանակ և ինչ եղանակով է երևան գալիս այդ գաղափարը, ըստ այնմ էլ նա լինում է առաջադէմ կամ յետադէմ, ուտոպիական կամ ընթացական։ Քաղաքական սեպարատիզմ, գրաւուած ազգային անկախութեան ցնորքով, յեղափոխական ըռպէներում, համեմատաբար ազատ կարգերի նախադառն, յետադէմ նացիօնալիսական ձգտում է, կեանքի կոչուած մրցման անընդունակ խաւերի կողմից, մանաւանդ երբ այդ պիտի կատարուի յանուն միութեան մի այնպիսի երկրի, ինչպիսին Թիւրքիան է։ Այդ է Թիւրք տիրող դասակարգի քաղաքական credo-ն, չնայած Թիւրք բուրժուազիայի այդ ձգտումը նրա գիտակցութեան արտայայտութիւնն է. մի մօմնտ, երբ Թիւրքական կապիտալը սթափուած որոնում է յենակէտ մրցութեան համար, երբ ազգայնական կազմակերպութեան ու պետութեան ձգտումը դառնում է կենսական պահանջ նրա գոյութեան համար։ Թիւրք կապիտալի կողքին կանգնած է նրա զօրեղ մրցակիցը՝ հայկական կապիտալը, աւելի ուժեղ, աւելի ճկուն մրցութեան մէջ և տիրական. մէկը միւսին ոչնչացնող այդ ուժերը, առաջադրում են մէկի միւսին ներհակ քաղաքական ձգտումներ. մէկի յաջողութիւնը միւսի ոտնահարուելն է նշանակուած. պանիսլամիզմի հանդէպ կանգնած է պանարմենիզմը, թէև քաղաքական պայմանների շնորհիւ իւր իրականանալու միջոցների մէջ վարանոտ, անորոշ ու թոյլ. այն դաշտը, որ ծրագրել է տիրանալ պանիսլամիզմը, նոյն դաշտը աչքի առաջ ունի նաև պանարմենիզմը. առաջինը, որ ձգտում է Անդրկովկասը դարձնել Թիւր-

1) Պանիսլամիզմը տարբեր տեղեր ունի տարբեր արտայայտութեան եղանակներ և զարգացման տարբեր աղբիւրներ։ Դա իւր մէջ ամփոփում է մանաւանդապէս տիրող դասակարգի ձգտումը, որի գոյութիւնը շատ է նեղուած ու մաշուած եւրոպական արգի կուլտուրայից։

քական նահանգներ, երկրորդը ուրախ կըլինի եթէ թիւրքահայկական նահանգները դառնան ուսումական նահանգներ և ամբողջ հայութիւնից այդպիսով կազմուի մի ֆեդերատիւ ազգային կառավարութիւն, եթէ ոչ անկախութիւն։ Այդ աւելի դրական կերպով այժմ կըլծամենան պանարմենիստները, երբ Ռուսեան ընթանում է դէպի ազատ կարգերը. և Եւրոպական մօկրատիան, որը անցանկալի էր համարում այդ, ինքնակալական դեսպօտիզմի ուժեղանալու պատճառով, այսօր համակրանքով կըվերաբերուի, որը և կըլինի ամենակտրուկ միջոցը թիւրքահայ դատի լուծման համար։ Պանարմենիզմ և պանիսլամիզմ, առաջնադաս ու յետամնաց երկու տարրերի՝ բուրժուազիայի մրցութիւնն է։ Պանարմենիզմը աւելի ունի ֆեդաղաքական արտայայտութիւն է գտել «Հ. Յ. Դաշնակցութեան» գործունէութեան մէջ¹⁾։ Հետեւեալ պանիսլամիստական ծրագրի իրականութեան համար, անհրաժեշտ է ճնշել եթէ հնարաւոր է ոչնչանիլ ամենամեծ արգելաւիթը՝ պանարմենիզմը։ Պանիսլամիստի տեսակէտից, պարարմենիզմ գաղափարը ամբողջութեամբ է իւր մէջ ամբողջ հայ ժողովուրդը. բնականաբար մի կռիւ մղուած հայ ժողովրդի դէմ, դառնում է պանիսլամիզմի համար կենսական անհրաժեշտութիւն։ Այս և աւելի յարմար քաղաքական բոլոր չի կարող լինել այլևս ագրեսիւ գործողութիւնները համար, որը ձգտում են շատ հետևողականօրէն իրականացնել նաև թիւրքաց հայաստանում և Պարսկաստանում, որտեղ կայ հայութիւն իւր տնտեսական ազդեցիկ դիրքով և քաղաքական-ազգայնական արտայայտուած ձգտումներով։²⁾

Կառավարութեան գլուխ կորցնելը ներքին և արտաքին պատերազմներէից, մի յարմար բոլոր է պանիսլամիստների համար, իրականութեան մօտեցնելու իրենց ծրագիրը. նրանք պիտի շտապէին, որովհետև որքան այդ խառը դրութիւնը նպաստում է նրանց, նոյնքան և այդ դրութիւնը իւր մէջ սնուցանում է նոր ռեժիմի պտուղները, ուժեղ և վստահաւոր մահմա-

1) Պանարմենիզմը արտայայտուել է նաև, այժմ կազմուածուած, «Հնչակեան կուսակցութեան» մէջ։

2) Այն հանգամանքը, որ սիւնիները չեն մասնակցում ջարդերին, պիտի բացատրել նրանով, որ բէգերը և բուրժուազիան զլխաւորապէս շիա-ներէից են և վերջիններս են զխաւորապէս, որ խառն ապրում են հայերի հետ, կազմելով Անդրկովկասի գիւղացիութեան մի ստուար մասը։ Զարգեր ու կոտորածներ կազմակերպող ֆէոդալների ազդեցութիւնը տարածուած է միայն իրենց գիւղացիութեան շրջանում, թէև այդ կարող է առաջ գալ նաև սիւնիների մէջ։ Իսկ թէ ինչու նրանք ձգտում են սիւնի կրօնի մի պետութեան հովանին և ոչ շիա, այդ էլ այն պատճառով, որ այդ լողէայի աւանդաբարձ թիւրք բուրժուազիան և նրա իդէօլոգները շատ լաւ հաս-

դական խանի ու բէգի համար: Եթէ անհնար թւար նրանց իրենց ծրագրի իրագործումը ներկայ բռնութեամբ, ապա աւելի լաւ է նրանց կարծիքով ուժեղանար հինը, քան նա քայքայուէր քեղափոխութեան հզօր զարկերից: Ահա թէ ինչու ստեղծուել է կրիտիքական դրութիւն պանիսլամիստների համար, երբ նրանք լողում են երկու կրակի մէջ. միակ կոնկրետ երևոյթը, որ անհրաժեշտ է ներկայումս իւր զօրեղ աստիճանին հասցնել, այդ հայերի կոտորածը ու տնտեսապէս սնանկացնելն է. դրանով մի կողմից շոյում են հին ռէժիմը, միւս կողմից հարթում են իրենց ճանապարհը: Որքան և թիւրք միջին ու մանր բուրժուազիան այս դէպքում համակրութիւն ունենան խոշոր բուրժուազիայի ձգտումներին, այնու ամենայնիւ նրանք չեն կարող համակրել կոտորածների տաքտիկան, որովհետեւ այդ դէպքում վնասուում է նրանց անմիջական շահերը:

Այսօր, երբ ինքնակալութիւնը յուսահատութեամբ թևերը փռել է խուար տարրերի վրայ, նրանց օգնութեամբ արշաւանք մղելով գիտակից տարրերի դէմ, վաղուայ կառավարութեան մէջ, երբ թիւրք ընդժուգիան ցոյց տուեց ակներև կերպով իւր հակապետական՝ սեպարատիստական նպատակները, պիտի նատարուի մի հակառակ պրօցեսս, կառավարութիւնը հայերի աջակցութեամբ ճնշում թերևս և կոտորած կարող է առաջ բերել թիւրք ժողովրդի մէջ: Բայց խնդիր է, թէ արդեօք վաղուայ աւելի ազատ քաղաքական կարգերը, ընդունակ կըլինեն ստեղծել այն բարբարոսութիւնները, ինչ այսօր է կատարուում, հայ ժողովուրդը ընդունակ կըլինի այդօրինակ վայրենութիւնների, ինչ այժմ է կատարուում, կազմակերպուած, գիտակցօրէն դաստիարակուած չիլ լինիլ կովկասեան և առանձնապէս հայ և թիւրք պրօլետարիատը, որը կըլինի պատուար ամեն մի ռէակցիօներ շարժման և ամեն մի բարբարոսութեան: Բայց միայն մի բան պարզ է, որ թիւրք բուրժուազիայի և կալուածատէրների այդօրինակ ձգտումները պիտի հանդիպեն Կովկասի բո-

կանում են, որ նրանց անհրաժեշտ է մի ուժեղ պետութիւն և մեծ ժողովուրդ, որ կազմէր մեծ և ուժեղ ազգային շահաւի: Պանիսլամիզմը այն վարադոյն է, որի առի վարագործում է թիւրք բուրժուազիայի քաղաքական ձգտումները. նա կարծում է այդ դիմակով՝ կը դրաւէ ամբողջ Ռուսիայի մահմեդական ժողովուրդը, զարկելով նրա ամենազուգուիչ նեարդին: Այդ շարժման իդէական (նոյնիսկ գործնական) ղեկավարները՝ թիւրք բուրժուազիայի իդէօլօգները՝ աշխատում են ապացուցել, որ իրենք թիւրք-թաթարական ցեղից են, Օսմանեան թիւրքերի արիւնակիցներ. ոմանք նրանցից ժխտում են նոյնիսկ իրենց թաթարական անունը (հէյաթ, «Каспий»):

լոր յառաջագէժ տարբերի խիստ դիմադրութեան, մանաւանդ, հայ ժողովրդի բոլոր դասակարգերի և թիւրք գիտակից պրօ-լետարիատի կողմից: Յամենայն դէպս, թիւրք բուրժուազայի՝ փողի և հողի մագնատների տնտեսական-քաղաքական շահերը ընթանում են տրամադծօրէն հակառակ, հայ բուրժուազիայի, այլև ամբողջ հայ ժողովրդի շահերին: Եթէ այսօր կռիւը ազգային բնաւորութիւն ունի, այդ շնորհիւ նրան, որ թիւրք բուրժուազիան կարողացել է քշել իւր լետակից անգիտակից թիւրք ժողովուրդը, որի պրօլետարիատի և աշխատաւոր մասսաների շահերը միանգամայն ներդաշնակ լինելով հայ ժողովրդի նոյն խաւերի շահերի հետ, արմատօրէն հակառակ են թիւրք խոշոր բուրժուազիայի և ֆէօդալների շահերին:

Իսկ այժմ, երբ հին ուշօրմը իւր ջախջախուած գլուխը պահելու համար կայաններ է որոնում, նա զուրկ է տաքտից ու հեռատեսութիւնից: Լրագրութեան առաջացրած աղմուկը, որ լսեցնում է բիւրոկրատիային, թէ Կովկասը կարող է ձեռքից դնալ, սթափուիւր, հանդիպում է բիւրոկրատիայի ականջների բթացած թմրկաթաղանթներին:

Շշմած բիւրոկրատիան չըփոխեց իւր քաղաքականութիւնը. և ինչ կարիք ունէր փոխելու. նա չէ վախճնում պանիւլա-միստական շարժումից, և թերևս չէ երևակայում թէ այդպիսի յանդուգն քայլ կարող է լինել ներկայումս, ժամանակակից միջազգային քաղաքական հանգամանքների մէջ, 1) և վերջապէս այդ մի քայլ է, որ Ռուսիայի ու Կովկասի ոչ մի քաղաքակիրթ տարրի կողմից աջակցութիւն չըգտնելուց բացի, պիտի հանդիպէր խիստ դիմադրութեան, երբ, կարծում է, ինքը, իւր հետ կըմիացնէ բոլոր նոյնիսկ դժգոհ տարրերին: Բայց նրան առայժմ հարկաւոր է ապահովելու իւր գլուխը յեղափոխու-թեան արհաւիրքներից, նրան հարկաւոր են անկեղծ բիւրո-կրատիական տարրեր՝ յենուելու նրանց վրայ. յեղափոխական Կովկասում աւելի՞ անկեղծ տարր միապետական տեսակէտից քան թիւրք բէգերը ու խաները: Եթէ բիւրոկրատիան չէ կա-րող չըվախենալ պանիւլամիզմից, բայց, յեղափոխութեան գրոհ-ների հանդէպ, շշմած ըոպէին *apres moi le deluge*:

Այնպէս որ, հայ-թիւրքական ջարդերը, աւելի ճիշտ ասած կռիւը, կրում է իւր մէջ երեք դրութիւն, որը միևնոյն դրու-թեան զարգացման երեք շրջանն է ներկայացնում. նախ, հայ կապիտալի գերազանցութիւնը թիւրք կապիտալի թուլութեան

1) Այդպիսի շարժում առանց թիւրքիայի աջակցութեան և թերևս ակ-տիւ մասնակցութեան չէ կարող լինել:

և անանկացող կալուածատիրութեան դիմաց. երկրորդ, ինքնակալութեան տապալման շրջանը, երբ թիւրք մագնատները զգացին ինքնակալութեան հետ միանալու և կռուելու անհրաժեշտութիւնը ներկայ կարգերից դժգոհ տարրերի դէմ, այսինքն այս պարագաներում հայ ժողովրդի. երրորդ, երբ նոյն յեղափոխութիւնը զարգացնելով թիւրք մագնատների քաղաքական գիտակցութիւնը, աւելի ևս սթափեցրեց նրանց մէջ քաղաքական ամբողջութեան, ազգայնութեան գաղափարը, մի հանգամանք, որի ժամանակ նրանց դէմ է կանգնում նոյն հայ ազգայնութեան՝ պանարմենիզմի գաղափարը, որը իւր հերթում շատ բնականօրէն զարգացրել է նոյն ազգային թշնամութիւնը, արհամարհանքը դէպի թիւրքը և աշակցել է պանիսլամիզմին փորելու հայութիւնն ու թիւրքութիւնն բաժանող անջրպետը: Ինքնակալութեան տապալումը և նրա քաղաքականութիւնը պիտի հրդեհէր այդ հնոցը, որի վառելանիւթերը երկար տարիների ընթացքում են հաւաքուել և որին նպաստում են այն հասարակական տնտեսական պարագաները, որի մասին մենք խօսեցինք: Կովկասի միջազգային կազմակերպուած և դաստիարակուած պրօլետարիատը միայն կարող է կազմել այն շաղախը, որը կըլինի խոշոր պատուարը ամեն տեսակի ազգայնական պայքարների, որ կըսպառնայ վարակել ամբողջ ազգութիւնը: Թիւրք հարստահարուող գիւղացիութեան գիտակցութիւնը միայն կարող է դուրս հանել նրան կալուածատէրերի որոգայթից, դարձնելով նրան գիտակից և կարող բանակ հէնց նոյն կալուածատէրերի դէմ. այդ բովէին կը խաւարի պանիսլամիզմի գոնատարներ: Խաղաղութիւն ու հաշտութիւն կարող է լինել ոչ թէ երկու կողմի տէրտէրների ու մոլլաների, բուրժուաների և խանների մէջ, այլ բանուորութեան, աշխատաւոր գիւղացիութեան և առհասարակ հարստահարուող մասսաների միջև: Պիտի բաժանել անդունդներով թիւրք աշխատաւոր մասնային տիրող, շահագործող դասակարգից, անտագոնիզմի թունալի սրուակներ խմեցնելով նրան և մղելով դէպի իւր էքսպլոտատորները: Քաղաքական դասակարգային գիտակցութիւնը այն հողն է, որի վրայ միայն կարող են աճել ապագայ բարօր օրերի պտուղները:

Բուրժուական պայքարը չէ դադարելու այսօր կամ վաղը, նա կը շարունակուի աւելի կատաղի, վաղուայ ազատ կարգերի մէջ, բայց այլևս նա չի յանդգնիլ դառնալ արիւնաներկ պատերազմ, այլ կուի տնտեսական մրցութեան ասպարիզում: Այն օրը, երբ կը հաստատուեն Ռուսիայում ազատ ռամկավարական կարգեր, այդ օրը կը լինի պանիսլամական ձգտումների

մահուան օրը. որքան աւելի ենք ընթանում դէպի այդ կարգերը, նոյնքան աւելի կրիտիքական է դառնում թիւրք իշխողներին դրուժինը, նոյնքան աւելի պիտի գիտակցէ թիւրք աշխատաւոր մասսան և բանուորութիւնը. վերջիններս գիտակցութիւնը պանիսլամիզմի հիմքերը փորող ուժն է: Թիւրք իշխողների աւելի կրիտիքական դրուժինը ազատ մըրցութեան արշաւի մէջ, աւելի պիտի նրանց բորբոքէ պանիսլամական կամ պանթիւրքական իդէայի մէջ, բայց նոյն յաւանական կամ պանթիւրքական իդէայի մէջ, բայց նոյն յաւանականութեամբ նա պիտի դառնայ աւելի և աւելի վատոյժ, հիւժուած և մահամերձ: Եթէ մի բոլէ ենթադրենք, որ ապագայում, Անդրկովկասում կըզարգանայ մի ուժեղ և մըրցութեան ընդունակ թիւրք բուրժուազիա, ապա պանիսլամիզմը նրա համար այլևս չի կարող լինել գոյութեան ու փրկութեան ելակէտ, եթէ նոյնիսկ այդպէս եղաւ, ապա նա անընդունակ պիտի հանդիսանայ արդէն գիտակցող թիւրք մասսան քաշել իւր յետեւից, իւր մերկանտիլ նպատակների համար: Ազատ օրերը, որոնք պըռլետարիատի տեղական կռուով մօտենում են, այդ ազատ օրերը պիտի ջախջախեն քարացած նախապաշարունակները թիւրք մասսայի գլխում, պիտի նրան հասկացնեն իւր շահերի տարբերութիւնը: Այնքան, որքան գոյութիւն ունի ներկայ ուժեղիմը, պիտի շարունակուի քաղաքացիական կռիւը երկու ժողովուրդների մէջ, որովհետեւ այդ կռիւներով ու դիմակներով է նա մտածում ապահովել իւր գոյութիւնը: Նա, ով անկեղծօրէն ցանկանում է հարստահարուող ժողովուրդների եղբայրութիւնը, խաղաղութիւնը ու նորմալ կեանքը, նա պիտի կռուէ յանուն հայ և առանձնապէս թիւրք պրօլետարիատի և հարստահարուող գիւղացիութեան քաղաքական-դասակարգային գիտակցութեան, յանուն ներկայ քաղաքական կարգերի խապառ կործանման, այն կարգերի, որ դրող սկզբնապատճառն է բոլոր այս ոճրագործութիւնների և սնուցանող մայրը աճելուն՝ բոլոր խաւար տարրերի, ձգտումների ու գործողութիւնների:

Ա. Ռուքէնի